

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

()տարաբաղաւոր գիւտում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаско“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կայքի կերպի և տնի օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբաւիչու բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Հասարակական բարոյականութիւնը—նեքին
տեսութիւն: Նամակ երեսնից: Նամակ Ախալ-
քալից: Նամակ Համախուց: Ներքին լուրեր:—
Արտաքին տեսութիւն: «Temps» լրագրի
կ. Պոլսի թղթակցութիւնը:—«Մշակի» հեռագիր-
ներ:—Հայտարարութիւններ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՒԹԻՒՆԸ

Այն դէպքը, որի մասին այս
մի քանի օրերը ամբողջ թիֆլիսը
խօսում է, այսինքն ճանճուղա-
գեան եղբայրների յանկարծակի
անանկանալը, մի նոր երեւոյթ է
թիֆլիսի ֆինանսական կեանքի
մէջ:

Մեր թիֆլիսցի վաճառակա-
նը, առհասարակ, կրեդիտով ա-
ռուտուր է անում, մեծ պարտքեր
է անում աջ ու ձախ և
երկար ժամանակ հարուստ է ձե-
ւացնում իրան: Բայց հէնց որ նա
տեսնում է թէ իր առևտրական
գործերը շատ լաւ չեն գնում,
կամ առհասարակ քաղաքի մէջ ա-
ռուտուրը դադարած է,—նա իս-
կոյն իր թէ շարժական և թէ
անշարժ ունեցածի մեծ մասը իր
կնոջ անունով է գրել տալիս և
յայտնվում է անկարող իր պարտ-
քերը վճարելու: Այդպիսով շա-
տերը, որոնք գումարներ ունէին
տուած իրան հարուստ ձեւացող
վաճառականին, մի անգամից
կորցնում են իրանց այդ գումար-
ները, շատերն էլ կատարելապէս
աղքատանում են:

Հատերը այդ տեսակ սնանկու-
թիւններից, այո՛, վնասվում են,
քանի մի օր, քանի մի շաբաթ,
գուցէ մի քանի ամիս շարունակ
ամբողջ քաղաքը խարդախ անան-
կութեան վերաբերութեամբ իրան
վրդովված է ցոյց տալիս, ամենքը
սարսափում են երբ իմանում են
թէ մի ռուբլը վրա 20, 10, կամ
5 կոպէկ են ստանալու, կամ գու-
ցէ ոչինչ էլ չեն ստանալու...
Բայց անցնում է մի կէս տարի,
գուցէ մի տարի,—և ահա սնան-
կացած վաճառականը վճարել է
իր պարտատէրերին տաս, գուցէ
հինգ կոպէկ ռուբլը վրա, ամենքը
գիտեն թէ բացի սորանից խար-
դախ մարդը պահած ունի իր

տանը շարժական կայքերով մի
մեծ հարստութիւն, որ կնոջ ա-
նունով է գրված, ունի անշարժ
կայքերն էլ, որոնք նոյնպէս կնոջ
անունով են գրված... Եւ ի՞նչ
էք կարծում, երբ հասարակու-
թիւնը իմանում է, թէ սնանկա-
ցողը, որ դիտմամբ էր սնանկացել,
դարձեալ շատ հարստութիւն-
ներ թաղցրած ունի, կարողու-
թեան տէր մարդ է,—այդ հա-
սարակութիւնը արդեօք պէտք է
պատժի հասարակական կարծիքի
վճուով սնանկացողին, պէտք է նը-
րան արհամարհի, թէ պէտք է
մեծահոգութեամբ ների նրա ա-
նադիւ ճարպիկութիւնը... Ուրիշ
հասարակութեան մէջ այդ տե-
սակ խարդախ մարդուն հասա-
րակութիւնը իր ամենախորին ար-
համարհանքով և զղուանքով կը
պատժէր,—բայց մեզ մօտ այդ-
պէս չէ...

Բաւական է եթէ դուք հա-
րուստ էք, բայց ի՞նչ միջոցներով
էք ձեռք բերել ձեր հարստու-
թիւնը,—այդ ոչ որին փոյթ չէ:

Ուրիշ երկրում հասարակու-
թիւնը կը դրօշմէր ամօթի և ա-
նարգանքի դրօշմ խարդախ, խա-
բեայ սնանկացողի ճակատին, իսկ
մեզ մօտ, հէնց որ իմանում են
որ սնանկացողը պահած ունի դը-
րամական միջոցներ, թաղցրած
ունի կայքեր,—նրա հետ հաշտ-
վում են, նրան կրկին ձեռք
են մեկնում, նրան յարգում են,
իսկ գուցէ, մինչև անգամ շատերը
գովում են նրա ճարպիկութիւնը:

Սուտ սնանկանալը երբ մեծ
կրեդիտ ունես, երբ ամենքին
պարտ ես,—նոյն բան է որ կրակ
տաս քո ապրանքին նրան ապա-
հովացնելուց յետոյ:

Բայց այդ բոլորը մեր հասա-
րակութիւնը շատ շուտ է մոռա-
նում և ներում է: Այդ բաւական
չէ, հէնց որ մեր թիֆլիսցիին ի-
մանում է որ խաբեայ սնանկա-
ցողը իսկապէս ունեւոր մարդ է,
—նա իսկոյն աշխատում է կրկին
մօտենալ այդ խարդախ մարդուն,
ձեռք է մեկնում նրան, շողորու-
թում է նրան, ամեն տեսակ պա-
տիւններ և յարգանքներ է ցոյց
տալիս նրան: Դու փող ունես,—

այդ բաւական է որ յարգված և
պատւած լինես ամբողջ քաղաքից...
Բայց ինչ տեսակ միջոցներով
ձեռք բերեցիր դու քո հարստու-
թիւնը,—այդ մի և նոյն է:

Ամեն թիֆլիսցի ծնողները
պատիւ կը համարեն ամուսնաց-
նել իրանց աղջիկը խարդախ և
խայտառակ կերպով սնանկացած
վաճառականի որդու կամ եղբոր
հետ...

Նկատված է որ երբ որ մի
վաճառական թիֆլիսում սնան-
կանում է, մի քանի ժամանա-
կից յետոյ նրա կրեդիտը
միշտ բարձրանում է մեր հասա-
րակութեան մէջ...

Ուրիշ երկրներում ասում են՝
«այդ մարդը սնանկացել է, ուրեմն
նրան հաւատ ընծայել չի լինի...»

Իսկ թիֆլիսում ասում են
«այդ մարդը սնանկացել է, նշա-
նակում է նա փողեր ունի,
ուրեմն նրան հաւատալ կարելի է,
որովհետեւ նա միայն սուտ կեր-
պով է սնանկացել, իսկ փողեր
ունի, հարստութիւն ունի... ուրեմն
եթէ նա ունեւոր է, նրան կարե-
լի է հաւատալ...»

Եւ ճշմարիտ, մեզ մօտ սնան-
կացած մարդիկների կրեդիտը
սնանկանալուց մի քանի ժամա-
նակից յետոյ, միշտ աւելանում
է...

Ահա մեր հասարակական բա-
րոյականութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 3-ին

Գեղատների սկզբներից մինչև յունվարի վեր-
ջերը սաստիկ ցրտեր էին լինում. Բ. Զեմաչափով
ցուրտը հասաւ մինչև 20—25 աստիճանին և այն-
ևս գրէթէ շարունակ երկու ամիս վառելափայ-
տի սառնեւր 75—80 աստիճան ցրտեց: Գուրը
շինկու գործերը դադարեցան, մշակ դասակարգի
օրական վարձերը կտրվեցան և հարկբաւոր ան-
ձեր մնացին օրական հացի կարօտ:

Այժմ ձիւնը սկսել է հալվել. կարելի է շու-
տով կը բացվեն դուրսը շինվող գործերը, բայց
միայն պիտի անեն արդեօք գործատէրերը սկսել ի-
րանց դրօշ և սորանով մշակին տալ միջոց առ-
ւելալ հացի գինը վստասելու. այդ չը գիտեմ,
կը որ ձուր մէկը 6—9 կոպէկ արժէ, մի ֆուն-

տը՝ 10—15 կ., հացինը՝ 6—8 կ., խզինը՝ 35—40
կ., պանիրը՝ 20—25 կ., նաւթինը՝ 13—15 կ., ցո-
րենի խալվարը 90—100—120 ռուբլ, գարու խալ-
վարը 70—80 ռուբլ, շաքարի պուղը՝ 9—10 ռ., և
այլն, չը գիտեմ, էլ ով սիրտ կանի այս չը լաված ու
չը տեսնված թանգութեան միջոցին մի նշանաւոր
գործ սկսել.—Հարկբաւոր մարդիկ կան, որոց
քաղցը էր իրանց ձակաթի քրտնալու վատանկել
աւօրեայ հացազինը՝ բայց գործ չը գտնելով, լա-
տիպված են մուրալ. Այս այսպէս լինելով, հա-
կանալի է որ քաղաքիս աղքատների թիւը՝ սովո-
րականից եռապատիկ ու քառապատիկ աւելցած
է.—Իրանը 3000 տանից փոքր ինչ աւելի է. այդ
թիւից մի հազարը կարելի է արուստից բոլոր-
վին դուրկ համարել. այո՛, համարձակ կարելի էր
անել, որ այսօր 5—6 և մինչև 7000 հոգի անհաց,
անփող և անգործ է մնացած:

Աւելացրու. սորա վրա և ցրտից առաջ ե-
կած զանազան հիւանդութիւնները, այն ժամանակ
հասկանալի կը լինի աղքատ դասակարգի խղճալի
գրովութիւնը:

Հարուստ և միջին դասակարգը բարոյապէս
պարտաւոր է այսօր պահպանելու իր աղքատ դա-
սին, եթէ ոչ ցրտից զոնէ հացի պակասութիւ-
նից. և դորա համար՝ մեր կարծիքով, հարկա-
ւոր է մինչև նոր հունը, կամ մինչև մայիսի կէսը,
120 խալվար հաց (ալիւր). Այդքան ցորենի ալիւ-
րը կարժէ մօտ տասներկու հազար կամ տասներեք
հազար ռուբլ. Այժմ խնդիրը սորանում է թէ այդ
12—13000 ռուբլին որ տեղից պէտք է ճարվի.
Քաղաքային խորհուրդը (Գուրմ) այս խնդրի մասին
ամուսն ընթացքում քանի մի նիստ է ունեցել,
զանազան առաջարկութիւններ են եղել, զանազան
վճիռներ են կայացել, բայց մինչև այսօր կատարեալ
նիստական ապահովութիւն չէ հասել խեղճ աղ-
քատներին.—Հարուստ քաղաքայինները փոխարի-
նաբար հաւաքել են իրանց մէջ մօտ 17 հազար
ռուբլ. և քաղաքային խորհրդից ընտրած յանձնա-
ժողովին յանձնել, որ Օղէսայից կամ Թիֆլիսից ա-
լիւր բերէ և բաժանէ էժան գնով հացագործներին,
որպէս զի սրբա ամբողջ քաղաքին հարկաւոր եղած
օրական հացը տան անպակաս, խանդը երեւցաւ, որ
նշանակաւորներ և ոչ էլ յանձնաժողովը վարվեցին
քաղաքային խորհրդի վճիռն համաձայն, թէ նոքա
և թէ յանձնաժողովը անգամներ իմանք վարու-
թեան կարգադրութեանց հակառակը գործեցին:

Նոր ժողովներ եղան, նորանոր վճիռներ կայա-
ցան, յաւ ձն աժողովի գործերը քննիչ ժո-
ղովի յանձնվեցան, հացարաններին վերահսկող-
ներ նշանակվեցան իրաւասուններից, որպէս զի
ալիւրի մէջ հող ու բրնձի թիւի չը խառնեն և
նում չը թխեն հացը ու հացթուփները չը
զրկեն, նշանակած գնից աւելի գնով չը վա-
ճառեն ծածուկ և գիւղացիներից իւրաքանչիւրին
օրական կէս լիտրից աւելի հաց չը ծախեն, որպէս
զի քաղաքն չընկնի մեծ պարտքի տակ և քաղա-
քայինների օրական հացաբաժինը չը պակսի և այլն
և այլն. Բայց այս բոլորը չը կարողացան ոչ մի
չօստիկով օգուտ բերել աղքատին, Այժմ քաղաքա-
պետը մի կողմից, ուստիպապետը միւս կողմից,
և մասնաւոր անձներ էլ մի երրորդ կողմից բացել
են ստորագրութիւն աղքատների օգտին, բայց
դորանով էլ աւելի բան չի զուլիս գալու, որովհետեւ
ուրիշ հազար էր սպասվում, տալիս է տալը, ուրիշ
տալը—տալիս է մէկ, Զէ կարելի ասել որ քաղա-
քային վարչութիւնը ու խորհուրդը բոլոր-
ովին անհոգ են դէպի աղքատ դասակարգի վե-
ճակը. տեսնում են ամենայն շարաթ մի, կամ մի-
նակ ժողով է լինում. խօսում են, խորհում են, վի-
ճում են, վճում են. բայց և այնպէս՝ աղքատ-
ների փոքր քաղցից վեց-վեց է տնում, հացթուփ-
ներն իրանց չարագործութիւնները շարունակում
են և կայացած վճիռներն էլ գնում են թղթերի
ծախելու. Ո՞վ է մեղաւորն արդեօք. քաղաքա-
պետ խորհուրդը, վարչութիւնը, թէ քաղաքային,
գովաւարանում եւ որոշակի պատասխանել այդ
հարցին, ես միայն գիտեմ, որ մեք շատ խօսող-
նք ենք:—Հացթուփների պարտադանցութիւնը, օրե-
նազանցութիւնը և կամայականութիւնը ծածկվում